

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՓԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արդարեւ յիշե՛ք անտի անունն ճշմանկի:
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ա. Զափածոյ ստեղծագործութեան գրական տեսակները

Հարուստ է Նարեկացու ստեղծագործութեան ժանրային կազմը: Նա առանձին յատկանիշներով հարստացրել է նախորդ դարերի գրական տեսակները եւ, որ կարելի է, ստեղծել է նոր ժանրեր: Ժանրերն առաջանում են պատմականօրէն: Այլ է հիմն, այլ՝ նոր գրականութեան ժանրային համակարգը: Իւրաքանչիւր գրող ժանրը ձեւակերտում է ըստ իր անհատականութեան: Ժանրի նշանակութեան եւ տարբերութեան ուղին ձգտում է անտիկ դրամայից մինչեւ արդի դրաման, ֆնարական երգը, առակից՝ առակը, եւ այլն: «Ժանրի մէջ մշտապէս պահպանուում են վաղեմիութեան չմոռնող տարրերը»(1), - գրել է Մ. Բախտինը: Նոր ժանրերի յայտնագործութիւնը ոչ այնքան կախուած է տաղանդից, որքան ժամանակի հոգեւոր-մշակութային մթնոլորտից: Նարեկացին միշտ էլ որոնել է ստեղծել է այնպիսի ժանրեր, որոնց մէջ, Բիւհնսկու բառերով ասած՝ «Տաղանդն իրեն զգացել է անսահման ազատ»(2):

Նոր ձեւերի որոնման մտահոգութիւնը ինքնանպատակ չի եղել Նարեկացու համար: Բովանդակութեան նորութիւնը նախ տեսանելի է ձեւի նորութեան եւ քարտուքեան մէջ: Ոչ մի բանաստեղծ չի կարող նոր էայլ անել առանց յենուելու գրականութեան զարգացման նախորդ

փուլերի ու փորձի վրայ: Սա նշանակալից է, որքան մասի եւ ամբողջի յարաբերութիւնը: «Համաշխարհային գրականութեան մէջ - գրել է Յովհ. Թումանեանը - ոչ մի բանաստեղծ չկայ, որ շատ կամ քիչ ազդուած չլինի իր նախորդներից: Ազդեցութիւնն էն սանդուղին է, որով սկսնակը բարձրանում է դէպի ինքնուրոյնութիւն»(3): Նարեկացին եւս անցել է իր ուսումնառութեան եւ ազդեցութեան շրջանը:

Մինչեւ Նարեկացին հայ բանաստեղծութեան հիմնական ժանրը հոգեւոր երգն էր: Իբրեւ պաշտամունքային երգեր՝ դրամֆ անբաժան են երաժշտութիւնից: Մարական բառը շրջանառութեան մէջ է մտել 12րդ դարից(4): Նեղ իմաստով շարական ճշմանկում է կանոնի երգ, լայն իմաստով՝ հոգեւոր երգ: Թեմատիկ առումով տարբերութիւն չկայ Նարեկացու բանաստեղծութիւնների եւ հոգեւոր երգերի միջեւ: Ժանրային առումով, սակայն, կայ մի կարեւոր տարբերութիւն. Նարեկացին չի գրել կանոնի երգեր, շարականներ(5): Ինչպէս հոգեւոր շատ երգեր, Նարեկացու բանաստեղծութիւնները եւս նուիրուած են Յիսուսի ծննդեանը, մկրտութեանը, խաչելութեանը, յարութեանը, համբարձմանը, պայծառակերպութեանը, եւ այլն:

Ժանրային տեսակետից կարելու է

մի հարց. Նարեկացու բանաստեղծութիւնները գրուել են եկեղեցական արարողակարգի՞ համար, թե՞ դրանք չեն կիրառուել ծիսական ոլորտում: Բանասէրներից ոմանք Նարեկացուն հակադրել են շարականագիրներին՝ ամոսեսելով մոյնիսկ թեմատիկ ընդհանրութիւնը նրա տաղերի եւ շարականների միջեւ: «Սուրբ գրքերին մամոռութիւնը, յարասութիւնը եւ դաւադրամական հարցերը բոլորովին դուրս են մնացել նրա լաւագոյն տաղերից»(6) - գրել է Մ. Մկրեանը: Եւ ապա՝ «Լիրիկայի ժանրը Նարեկացին ազատեց եկեղեցուց ունեցած ենթակայական կախումից եւ խիզախեց այն պատկերացնել անկախ արարողութիւններից»(7): Եթէ «շարականների կաղապարաւածութեան դիմաց - ինչպէս ասում է Պ. Սեւակը - Նարեկացին գրեց իր անկաշկանդութիւնը, նրանց խորհրդանիշների դէմ՝ իր կենդանի պատկերները, նրանց բնագրկութեան դէմ՝ իր բնապաշտութիւնը» (8) - ապա սա չի մշակուել, թէ նա չէր գրում ժամակարգութեան համար: Նարեկացին փոխեց երգի որակը: Շարականագիրների համար կարեւոր չէր անհատականութիւնը, այլ ուղղադաւանութիւնը: Կրկնութիւնը խրախուսելի էր, յարասութիւնը՝ պարտադիր: Նարեկացին խախտեց այդ փարպածութիւնը: Նա երգը տգործեց բնութեան եւ մարդու կենդանի զգացողութեամբ: Եւ եթէ ըստ Մ. Արքեանի՝ Նարեկացու արժանիքներից մէկն էլ այն է, որ «նա համարձակուել է ոչ միայն տաղերի, այլեւ յանգերի նկատմամբ մէկ-մէկ մանր Ողբերգութեան մէջ հետեւել աշխարհիկ երգասացներին»(9) ապա սա չի մշակուել, թէ տաղերը արարողութեան համար չէին: Նարեկացին դիմել է ժողովրդական բանարուեստին՝ հոգեւոր երգարուեստը կերպարամափոխելու, թարմացնելու համար:

Ի՞նչ է տաղը, գանձը, մեղեդին եւ այլն: Բայց նախ պէտք է պատասխանել այն հարցին, թէ ի՞նչ է գանձարանը: Նարեկացու բանաստեղծութիւններն անկախ միատրոներ չեն: Նա ստեղծել է երգերի մի նոր ժողովածու, որը յետագայում կոչուել է գանձարան. ըստ նոր Հայկագեան բառարանի՝ «Գիրք գանձուց եւ փարոզից, որք մուագին յեկեղեցուց», իսկ գանձեր կոչուել են «երգք ու փարոզք, առեալ ի սկզբանաւորութենէ երգոց Նարեկացւոյն»(10): Որ Նարեկացին հիմնադրել է երգերի նոր ժողովածու, այս տեսակետն առաջին անգամ արտայայտել է Աս. Մնացականեանը: «Մեծ է Գրիգոր Նարեկացու դերը նաեւ գանձերի, տաղերի եւ մեղեդիների զարգացման գործում: Ըստ երեւոյթի «Գանձարան» կոչուած ժողովածուների հիմնադիրն էլ Գրիգոր Նարեկացին է: Այդ ժողովածուն ծնունդ, որպէս զի Շարակնոցի հետ միասին ծառայել եկեղեցական երգ ու երաժշտութեան զարգացմանը»(11) - գրել է Մնացականեանը: Այս տեսակետը պաշտպանեց Արմինէ Քեօշկերեանը. «գանձերի եւ տաղերի, ինչպէս նաեւ Գանձարանների հանգամանայից ֆնուրիւնը մեզ բերեց այն համոզման, որ եւ գանձարանային միատրոների, եւ դրանք ամփոփող ժողովածուների սկզբնաւորումը կապուել է Գրիգոր Նարեկացու անուան հետ» (ԳՆՏԳ, 21):

Այսպիսով՝ Նարեկացին գրել է հոգեւոր երգերի մի ժողովածու՝ եկեղեցական տօների համապատասխան երգերի որոշակի դասաւորութեամբ: Իւրաքանչիւր երգ՝ իրրեւ բանաստեղծութիւն, ունեցել է իր ժանրային բնոյթը եւ իր ճայնեղանակը՝ իրրեւ երգ: Երգերի այդ կարգը առեալ տօնի համար ունեցել է 4-5 միաւոր՝ գանձ, տաղ, մեղեդի, փոխ, յորդորակ: Նրանք իրարից տարբերուել են թէ՛ ծաւալով եւ թէ՛ ձեւակառուցութեամբ՝ առանձին յատկանիշներով՝ գրական

տեսանկլիմից, ձայնեղանակներով՝
 երաժշտութեան առումով:

Արդ, ի՞նչ է գանձը: Դա հոգեւոր
 երգի տեսակ է՝ մուիրուած եկեղեցական
 այս կամ այն տօնին: Գանձը հիմնականում
 պատմողական բնոյթ ունի՝ մատուցուած
 քնարական շնչով: Գանձը փոխարինել է
 քարոզին, ճառին, բանաստեղծեան
 մուիրուած սրբերին կամ սրբութիւններին:
 Նարեկացին սկզբում գրել է չափածոյ
 քարոզներ: Դրանք ընկալուել են իբրեւ
 երգի տեսակ: «Բանն այն է, որ հնագոյն
 քարոզները լոկ խրատական բնոյթի
 ընթերցուածներ էին կամ արձակ
 շարադրամբով գոհարանութիւններ, որոնք
 կոչուած էին աղօթքի հրաւիրելու
 հասարակութեանը: Նորաստեղծ քարոզները
 խրատներ կամ աղօթքներ չէին. դրանք
 եկեղեցական տօներին նուիրուած
 բարձրարուեստ բանաստեղծութիւններ էին՝
 ստեղծուած տօնի խորհուրդն ունկնդրին
 առաւել գրաւիչ եղանակով մատչելի ու
 հասկանալի դարձնելու» (ԳՆՏԳ, 30) –
 այսպէս է հիմ քարոզների եւ գանձերի
 տարբերութիւնը բացատրել Ա.
 Քեօշկերեանը:

Նարեկացու բոլոր տասը գանձերն էլ
 իրենց խորագրերում ունեն քարոզ բառը:
 1. Քարոզ ասացեալ Գրիգորի Նարեկացւոյ,
 ի Ս. Մնունդն եւ Մկրտութիւնն («Գանձ
 անապական, ծածկեալ մեծութիւն»),
 2. Քարոզ Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ,
 ի Ս. Յովհաննէս Մկրտիչն («Իսկապէս
 անսկիզբն եւ սկզբնացոյցիչ յոչիեց
 գոյիցս»), 3. Գրիգորի Նարեկացւոյ
 ասացեալ քարոզ ի գալուստ Ս. Հոգւոյն
 («Գանձ լուսոյ, փառակից Որդւոյ»), 4.
 Քարոզ Նկեղեցւոյ, Գրիգորի Նարեկացւոյ
 ասացեալ («Գանձ քաղաւի քարութեան
 մեծի»), 5. Քարոզ Գրիգորի Նարեկացւոյ,
 ասացեալ ի Ս. Լուսաւորիչն Գրիգոր
 («Գերաւիրաշ ցնծութեամբ բերկրեալ
 մանկունք Սիւնի»), 6. Քարոզ Նկեղեցւոյ

եւ Տապանակին տեսնն Գրիգորի
 Նարեկացւոյ («Ժողովեալս ամենեքեան ի
 Ս. Կաթողիկէ»), 7. Քարոզ Վարդավառի,
 ի Գրիգորի Նարեկացւոյ («Գանձ անապատում
 եւ անճառելի»), 8. Գրիգորի Նարեկացւոյ
 քարոզ, ասացեալ ի փոխումն ամենաւրեմեալ
 Ս. Աստուածածնին («Գանձ անապական
 ծածկեալ սրբութեամբ»), 9. Քարոզ Ս.
 Խաչին, Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ
 («Գանձ անցնին ծածկեալ մեծութիւն»),
 10. Քարոզ համարէն Ս. Առաքելոցն,
 Գրիգորի վարդապետի (Գանձ փառաց
 խորհրդոյ ինքնածագ լուսոյն):

Ըստ սկզբնատողերի՝ եօթ գանձ
 սկսւում է գանձ բառով (1,3,4,7,8,9,10):
 Տրդ գանձը թէւ սկսւում է Գերաւիրաշ
 բառով, բայց ունի բանակապ, որը յօդւում
 է «Գրիգորի գանձ» (ԳՆՏԳ, 173): Երդ
 գանձը սկսւում է «Ժողովեալս» բառով եւ
 միակ գանձն է, որ չունի բանակապ: Վեց
 գանձ ունեն մոյն՝ «Գրիգորի երգ»
 բանակապը: Դրանք են՝ 1,3,4,7,8,9: 10րդ
 գանձը երբ քառի փոխարէն ունի
 աղաւաղուած՝ եղի: 2րդ գանձի բանակապը
 յօդւում է «Ի Ձայն երգ» (ԳՆՏԳ, 141), ուր
 Ձայն բառը գործածուած է իբրեւ Յովհաննէս
 Մկրտչի մականուն:

Եւ այսպէս, ըստ խորագրերի
 Նարեկացու տասը գանձերն էլ կոչուել են
 քարոզ: Ըստ բանակապերի՝ ինն գանձերից
 ութը Նարեկացին կոչել է երգ եւ մէկը՝
 գանձ: Հետեւաբար, անվերապահ է, որ
 Նարեկացին իր այդ բանաստեղծութիւնները
 կոչել է երգեր եւ միայն մէկը՝ գանձ:
 Հետագայում, սակայն, ընդհանրացել է
 գանձ անունը, եւ այստեղ որոշակի դեր է
 խաղացել այդ գործերի սկզբատողերի
 առաջին գանձ բառը: Յայտնի է, որ
 այբբենակարգ գրուած շարականները
 կոչւում են անձինք՝ Կոմիտաս Կաթողիկոսի՝
 Հռիփսիմեանց կոյսերին մուիրուած
 շարականի «Անձինք մուիրեալ սիրոյն
 Քրիստոսի» առաջին տողի առաջին

բառից: Գանձերի ժողովածուն կոչուել է գանձաբան, գանձի հեղինակը՝ գանձաաւաց: «Գանձ անունը պատահաբար գործածուած է ~ գրել է Մ. Օրմանեանը ~ որովհետեւ այդ ձևով մեծ փարզներում առաջինները Ս. Գրիգոր Նարեկացին գրած է եւ իր անուան տառերով տուներու սկզբնագրերը կազմել ուզելով՝ միշտ ք տառով ու «գանձ» բառով սկսած է երեք փարզներն եւ անկէ առնելով՝ ամէն նման ձևով փարզներ «Գանձ» կոչած են»(12):

Քարոզի եւ գանձի կապը պայմանաւորուած է ոչ միայն թեմատիկ ընդհանրութեամբ, այլեւ ձևականութեամբ: Թէ փարզի եւ թէ գանձի մէջ պատմողական տարրը զուգորդուած է փարականութեան, յորդորի եւ խրատի հետ: Թէեւ փարզն արձակ է, իսկ գանձը՝ չափածոյ, բայց երկուսն էլ ունեն դիմումի ձևեր՝ ունկնդիրներում արարողութեանը հաղորդակից դարձնելու համար: Այսպէս՝ «Լուր, տէր, եւ ողորմեա», «Սւ եւս խաղաղութեան գտէր աղաչեցում» եւ այլն:

Նարեկացին օգտուել է փարզի ժանրային այդ յատկանիշներից՝ ստեղծելով գրական նոր տեսակ՝ գանձ: Գանձը բաղկացած է անհաւասար տներից, տները՝ տարբեր տողաքանակից: Քանի որ Նարեկացու գանձերը գրուած են տնագլուխ տառերի բանականով՝ «Գրիգորի երգ», «Գրիգորի գանձ» եւ «Ի ձայն երգ», ապա հեշտ է հաշտուել, որ այդ գանձերը բաղկացած են 9, 10 եւ 11 տներից: Մաւալով ամենափոքր գանձը (սկզբնատողը՝ «Գանձ անկիմ, ծածկեալ մեծութիւն») ունի 67 տող՝ ըստ Քեօշկերեանի տողատման (ԳՆՏԳ, 212-218), ամենաձաւալունը (սկզբնատող՝ «Իսկապէս անսկիզբն եւ սկզբնացուցիչ յոչէից գոյիցս»)՝ 168 տող: Տների տողաքանակը տատանուում է 10-20ի միջեւ:

Գանձերի տներն աւարտում են կրկնակներով. քերեմ երկու օրինակ՝

1. — Արդ, քարեխաւսա առ Գրիստոս քազաւորն՝

Հասանել մեզ ի յաւգնութիւն,
աղաչեմք:

(ԳՆՏԳ, 132)

2. — Բարեխաւսութեամբ սրբոյն
Յովհաննու Կարապետին՝

Խմայեա՛ ի մեզ, մարդասէր, աղաչեմք:

(ԳՆՏԳ, 142)

Գանձի վերջերքը սովորաբար կոչուում է փոխ եւ հիմնականում կապուած է ձայնեղանակի փոխուելու հետ: Վերջերքը առաւել փարական քնոյթ ունի, քանի որ արտայայտում է օրինութիւն, մաղթանք, խնդրում է: Ժանրի զարգացման տեսանկիւնից հետաքրքիր են թաղման գանձերը: Քրիստոսեանայ միւս ժողովուրդները չունեն գանձերի համարժէ հոգեւոր երգեր: Իրաւացի է Մ. Պետրեանը, հաւաստելով, որ գանձերը եւ տաղերը «հայու արտադրութիւնք են, մերինն են»(13): Գանձի հիմնադիրն է Գրիգոր Նարեկացին:

Տաղը եւս՝ իբրեւ հիմներգութեան տեսակ՝ կապուում է Նարեկացու անուան հետ: Գտնելով, որ տաղ են կոչուել ինչպէս հոգեւոր, այնպէս էլ աշխարհիկ երգեր, Ա. Արգարեանը գրում է. «Այս ժանրատեսակի գեղարուեստական զարգացման ուղին եւ նոր նուաճումն են մշակութային Գրիգոր Նարեկացու գանձարան հոգեւոր երգերի ժողովածուում տեղ գտած տաղերը»(14): Ա. Քեօշկերեանը նոյնպէս տաղը համարում է երգի տեսակ, առանձին ժանր: Ըստ Քեօշկերեանի՝ թէեւ տաղ հասկացութիւնը լայն ընթացում ունի իբրեւ երգ, չափածոյ բանաստեղծութիւն, երգուող բնութեւն եւ այլն, բայց «Գանձարաններում այդ բանի տակ հասկացուում է հոգեւոր երգի որոշակի տեսակ, որը չի կարող շփոթուել ոչ գանձի, ոչ շարականի, ոչ էլ այլաքնոյթ

որել է ստեղծագործութեան հետ» (ԳՆՏԳ, 32): Ըստ Նոր Հայկազեան բառարանի՝ տաղը չափածոյ խօսք է, երգ. «Բան չափաբերական, ոտանաւոր երգ, բերթուած նուագելի» (15): Ըստ արդի գրականագիտական բառարանի՝ տաղը բանաստեղծութեան անուանում է հայ միջնադարեան բնարեքութեան մէջ. «Միջնադարեան Հայաստանում տաղ ասելով հասկացել են նաեւ առհասարակ չափածոյ ստեղծագործութիւն, տարբերելով այն արձակից» (16):

Հարց է ծագում տաղը ժամր է, թէ՞ այդպէս է կոչուել չափածոյ ամէն մի ստեղծագործութիւն: Գրական սեռի՞ գործառութիւն ունի, թէ՞ ժամրի որոշակի սահման: Այս եւ յարակից այլ հարցերի բնութեանն է նուիրուած Վարազ Ներսիսեանի «Տաղերգութեան ժանրերը» ուսումնասիրութիւնը: Իրաւացիօրէն գտնելով, որ գրականագիտութեան մէջ տաղի վերաբերեալ չկայ ամբողջական ըմբռնում, որ «հին գրականութեան մասնագէտների շրջանում իշխում է մի մտայնութիւն, թէ հայ միջնադարեան չափածոյի գրական տեսակների շարքում տաղը եւս ներկայացնում է նրա մի առանձին ժանրը» (17), Ներսիսեան ընդունում է, որ «տաղը իր բովանդակութեամբ նոյնական է չափածոյ կամ ուրիշ կազմակերպութեամբ օժտուած ստեղծագործութեան» ըմբռնման հետ եւ իբրեւ գրականագիտական հասկացութիւն չի մտնում ժանր կատեգորիայի մէջ» (18):

Եւ հակուած եմ ընդունելու, որ հայ միջնադարեան բնարեքութեան մէջ տաղը ներկայացնում է ինքնուրոյն ժանր: Ճիշտ է, միջնադարի հայ բանաստեղծութեան մէջ տաղ եւ կոչուել ամենատարբեր բնոյթի չափածոյ գրութեան՝ երգ, վիպասանութիւն, վարք, ներքող, ողբ, եւ այլն, բայց միշտ է նաեւ այն, որ երբեք գանձը տաղ չի կոչուել, շարականը,

հանելուկը, առակը՝ նոյնպէս: Տարբեր բնոյթի չափածոյ գրութեան տաղ եւ կոչուել մի կողմից այն պատճառով, որ միջնադարում միեւնոյն գործը կարող էր կոչուել մի քանի անուններով եւ, ընդհակառակը, տարբեր գործեր կարող էին ունենալ միեւնոյն ժանրանունումը, միւս կողմից՝ գրական երկը կարող էր պարունակել տարբեր ժանրերի յատկանիշներ: Ուստի տաղ կոչուած շատ գործեր իսկապէս տաղ չեն, ինչպէս երգ, գովեստ, ներքող, մեղեդի եւ նման այլ բերթուածներ կարող են լինել տաղեր: Մ. Արեղեանի այն դիտարկումը, թէ «ուրախ շարականներն էլ վերածուել են տաղերի, որ առանձին տեսակի հոգեւոր երգեր են, յօրինուած ուրախ տօնակատարութիւններին հանդիսութիւն տալու համար» (19), միշտ է թէ՛ մասնաւորապէս Նարեկացու տաղերի եւ թէ՛ ուշ դարերի աշխարհիկ տաղերի ժանրային բնութագրման իմաստով: Ամէն բանաստեղծութիւն չէ, որ երգ է, բայց երգն անպայման բանաստեղծութիւն է: Այսպէս էլ տաղը բանաստեղծութիւն է, բայց ամէն բանաստեղծութիւն չէ, որ տաղ է:

Միջնադարի հեղինակները շարականագիրներին չեն շփոթել տաղերգուների հետ, գանձասացներին՝ նոյնպէս: Կիրակոս Գանձակեցին, օրինակ, խօսելով Ներսէս Շնորհալու մասին, գրում է. «Բագում ինչ կարգացցա նա յեկեղեցիս քաղցր եղանակաւ, խորովային ռնով շարականս, մեղեդիս, տաղս եւ ոտանաւորս» (20): Ստեփանոս Ագոնցը խօսելով ոտանաւորի եւ նրա տաղաչափական տեսակների մասին, օրինակներ է բերում Շնորհալու բերթուածներից եւ չշարունակելու համար՝ աւելացնում. «Եւ այլ եւս քազում շարականք, եւ տաղք, եւ գանձք» (21): Միջնադարեան աւանդոյթը միշտ էլ պահել է շարականի, գանձի, տաղի ժանրային տարբերութեան

պարզութիւնը: «Ասաց քաղում գանձս եւ տաղս քաղցր եւ անուշ եղանակաւ, զոր երգի միմչեւ ցայսօր յեկեղեցիս Հայաստանայց» (22) - գրել է Ղազար Ջահկեցիին Առաքել Բաղիշեցու մասին: Ուրեմն՝ հայ հիմ գրականութեան մասնագէտները՝ հենրից միմչեւ Մ. Արեղեան եւ ապա միմչեւ մեր օրերը՝ Ա. Քեօշկէրեան եւ Ա. Արզարեան, որոնք տաղը ներկայացնում են իրրեւ գրական առանձին ժանր, ունեն քաւարար հիմքեր (23): Տաղը քնարական քանաստեղծութիւն է, որը հոգեւոր երգերի շարքում յաջորդել է գանձին, ունեցել է նոյն թեման, բայց իր ձայնեղանակը: Աշխարհիկ տաղերն անկախ են արարողակարգից եւ իրրեւ խոհաքնարական քանաստեղծութիւն յարատեւում են միմչեւ այսօր:

Նարեկացու գանձերն ու տաղերը ունեն փոխեր, որոնք կարող են լինել թէ առանձին երգեր, եւ գանձի, տաղի, մեղեդու հետ կազմել մի ամբողջութիւն եւ թէ գանձի կամ տաղի հատուածներ՝ պայմանաւորուած ձայնեղանակի փոփոխման հետ: Գանձարանային միաւորների շարքում փոխերը ունեն նոյն թեման, ինչ գանձը: Ձեռագրերում փոխերը սովորաբար անվերնագիր են, ունեն միայն փ. կրճատ կամ փոխ լրիւ նշումներ: Իրրեւ ինքնուրոյն քանաստեղծութիւն փոխը չի ունեցել յետագայ զարգացում:

Նարեկացու առանձին քանաստեղծութիւններ կոչուել են մեղեդի. «Մեղեդի ծննդեան» (ԳՆՏԳ, 123) եւ այլն: Գանձարանային միաւորների շարքում մեղեդին յաջորդել է փոխին: Հաւանաբար մեղեդի է կոչուել ձայնեղանակի համար: Իրրեւ գրական տեսակ՝ մեղեդին նկատելի տարբերութիւն չունի տաղից:

Ամշուշտ, փոխը, մեղեդին, յորդորակը, որը այդպէս է կոչուել թեթեւ, աշխոյժ եղանակով երգուելու համար, ունեցել են իրենց որոշակի կարգն ու

տարբերութիւնը ժամասացութեան մէջ, բայց իրրեւ գրական ստեղծագործութիւն համարժէք են տաղին: Եւ պատահական չէ, որ Նարեկացու միեւնոյն քանաստեղծութիւնը ձեռագրերում մերթ կոչուել է տաղ, մերթ՝ մեղեդի, մերթ՝ փոխ կամ յորդորակ: Սա կարող է թուալ գրչագրական շփոթութիւն: Բայց հենց այդ շփոթութիւնն էլ վկայում է այն իրողութիւնը, որ այդ գործերը աստիճանաբար միաւորում են նոյն ժանրի՝ տաղի մէջ: Այսպէս՝ «էին աջոյ աջոյ ձեռին» սկզբնատողով քանաստեղծութիւնը ձեռագրերում ունի թէ՛ «Տաղ հրաշայարմար ի Գրիգոր Նարեկացոյ» եւ թէ՛ «Ի սուրբ Գրիգորէ Նարեկացոյն մեղեդի անոյշ» (ԳՆՏԳ, 72) խորագրերը: «Գունդք սուրբ վկայիցն» սկսածով տաղը, որի մի հատուածը կազմում է հենց տաղի փոխը, ունի քանակապ՝ «Գրիգորի ե երգս այս + Ի քառասուն վկայսն» (ԳՆՏԳ, 78 81): Տաղը, սակայն, ոչ մի խորագրում չունի երգ քառը: «Սեաւ նմ, գեղեցիկ» սկզբնատողով փոխը խորագրուած է նաեւ «Յորդորակ» (ԳՆՏԳ, 94) «Այն փոքրիկ հաւտին տրտմեալ» սկզբնատողով փոխը՝ «Տաղ Համբարձման, սրբոյն Գրիգորի Նարեկացոյ» (ԳՆՏԳ, 110), «Գոհար վարդն վառ առեալ» սկսածով տաղը՝ եւ տաղ, եւ գովեստ, եւ փոխ: Կարելի է օրինակների թիւը բազմապատկել, բայց երեւոյթի էութիւնը մնալու է նոյնը: Քնարական երգերի ժանրային տարբերւման համար չի եղել յստակ չափանիշ: Սակայն իրրեւ երգուող բերթուածներ՝ գանձը, տաղը, մեղեդին, փոխը եւ յորդորակը իրենց արտագրական կիրառութեան ոլորտում, ժամերգութեան մէջ, ինչպէս նաեւ գանձարանային համակարգի տեսանկիւնից ունեցել են որոշակի տեղ եւ դեր, որոնք թէեւ այսօր էական չեն թուում, սակայն ժամանակին հիմք են հանդիսացել նրանց տարբերակման համար: Առանձին

դէպքերում տարբերական հիմքը եղել է ձայնեղանակը եւ կիրառութեան մէջ գրաւած տեղը, միւս դէպքերում՝ գրական ժանրի ձեւակառուցութեամբ իւրայատկութիւնը: Դանձր, օրինակ, յատկաօրէն տարբերում է թէ տաղից եւ թէ մեղեդուց, թէ փոխից եւ թէ յորդորակից: Դանձն ունի անկի մեծ ծաւալ, կանոնաւոր կրկնակներ, փոխ, գրուած է ազատ ոտանաւորով: Տաղերն ունեն անկի փոքր ծաւալ, հիմնականում գրուած են կանոնաւոր տաղաչափութեամբ, անկի բնարական են եւ յուզական: Իրրեւ կանոն՝ Նարեկացու գանձերի վերջին տունը միշտ եղել է փոխ: Փոխտակ է ոչ միայն ձայնեղանակը, այլեւ հատուածի բնարական տրամադրութիւնը: Դանձերի աւարտն ունի փառաբանական եւ մաղթողական բնույթ, անհատական զգացմունքների ինչ-որ ցուլներ: Այստեղ մաղթանքներ են յղուած ժողովրդին, թագաւորին, կաթողիկոսին, զօրաբանակին, հոգեւոր դասին, եւ այլն, խաղաղութիւն եւ քաղաքութիւն հայցում ժողովրդի, երկրի, աշխարհի համար, հաստատութիւն՝ եկեղեցու համար, եւ այլն եւ, միաժամանակ, քաղաքայինութիւն՝ Աստուծոյ ներմանն արժանանալու համար:

Առանձին տարբերութիւններ եղել են նաեւ տաղերի, մեղեդիների, յորդորակների, փոխերի միջեւ: Յամեմայն դէպս, Նարեկացու թէ յորդորակները եւ թէ մեղեդիները գրուած են կանոնաւոր տաղաչափութեամբ, ունեն աշխոյժ ուրիշ, յղկուած արուեստ: Ժանրային յատկանիշների փոխներքափանցման շնորհիւ, սակայն, աստիճանաբար ջնջուել են տաղի, փոխի, մեղեդու եւ յորդորակի միջեւ եղած ձեւակառուցութեամբային տարբերութիւնները եւ յարատեւել է տաղը: Նարեկացին ստեղծել է իր երգարանը՝ թեմատիկ որոշակի ընդգրկմամբ: Այն ունեցել է իր միաւորների որոշակի համակարգը՝ գանձ, տաղ, փոխ, մեղեդի, յորդորակ: Դրանք յատկութեամբ գանա-

գանուել են թէ իրրեւ բնարական քանաստեղծութիւններ՝ իրենց ժանրային յատկանիշներով, թէ իրրեւ հոգեւոր երգեր՝ իրենց ձայնեղանակներով եւ ժամկարգութեան մէջ ունեցած տեղով: Դանձարանային միաւորների այդ համակարգը ստեղծել է Նարեկացին, գանձարան ժողովածուն՝ նոյնպէս: Բնարական երգերը նա հարստացրել է նոր յատկանիշներով, ստեղծել նոր ժանրեր՝ գանձը եւ տաղը:

ԱՐԽԻՒՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. М. М. Бахтин. Проблемы поэтики Достоевского, М., 1979, с. 121.
2. В. Г. Белинский, Полное собрание соч., т. 10, М., 1956, с. 315.
3. Յովհ. Թումանյան, հ. 4, 382
4. Ա. Աբգարեան, Հիմնագրութեան ժանրը. (տե՛ս Հայ Միջնադարեան Գրականութեան ժանրեր, Երեւան, 1984), էջ 100
5. «Այսօր արձակեցա՜ր ի կապանց մախնոյ» սկզբնատողով շարականը (տե՛ս՝ Մարական հոգեւոր երգաց, էջմիածին, 1861, էջ 378), որը Նարեկացու Յարութեան տաղի աւարտն է համարուել՝ դեռեւս մնում է գննելի (Գ. Աբգարեան, Վերծանութիւն Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի», «Էջմիածին», 1974, մո. 3, էջ 42-48 եւ մո. 25 էջ 39-48): Առաջինը Մ. Արեղեանն է նկատել, որ շարականը կազմում է «Նարեկացու Յարութեան» տաղի շարունակութիւնն իրրեւ Սիոնի որդիների երգ, որ պէտք է լինէր տաղի վերջում եւ պակասում է» (Մ. Արեղեան, հ. Գ, էջ 626): Հարցին անդրադարձել է նաեւ Ն. Թախիզեանը (Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտութիւնը 5-15րդ դդ., էջ 87-88):
6. Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, էջ 141
7. Նոյն տեղում, էջ 140
8. Պ. Սեւակ, Երկերի ժողովածու, հ. 5, Երեւան, 1974, էջ 246
9. Մ. Արեղեան, հ. Գ, էջ 619
10. ՆձԲ, հ. 15 էջ 529
11. Հայ ժողովրդի պատմութիւն, հ. 3, էջ 360
12. Մ. Օրմանյան, ծիսական բառարան, Ամբիփաս, 1957, էջ 96
13. Մ. Պետրեան, Միջին դարու հայ կրօնական բանաստեղծութիւն, «Բազմալեզ», 1905, էջ 556
14. Ա. Աբգարեան, մշվ. 30դ., էջ 103

15. ՆՀԲ, հ. 2, էջ 839

16. է դ. Ջրբաշեան, Հ. Մախչանեան, Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 283

17 Վ. Ներսիսեան, Տաղերգութեան ժանրերը. (տես՝ Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր), էջ 185

18. Նոյն տեղում, էջ 620

19. Մ. Արեղեան հ. Գ, էջ 620

20 Կիրակոս Գամաակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 119

21. Ստ. Ագոնց, ճարտասանութիւն բովանդակեալի հինգ գիրս, Վենետիկ, 1775, էջ 42

22. Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 643

23. Տաղ բառը պատկանում է չստուգաբանուած բառերի թւին: Բառը շրջանառութեան մէջ են դրել Յունաբան դպրոցի թարգմանիչները: «Ոսկեդարում չկար բառս. – գրում է Հր. Աճառեանը (Հայերէն արմատական բառարան, հ. 4, էջ 362): «Տաղ տերմինը նշանակէ դասական հայերէնից չի աւանդուել: Այն հանդիպում է յունաբան դպրոցի թարգմանութիւններում» – գրել է Ա. Մուրադեանը (Յունաբան դպրոցը եւ նրա դերը հայերէնի

փերականական տերմինաբանութեան ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 161): Քանի որ տաղ տերմինը լայն իմաստով հանգում է չափածոյ խօսքին, ուստի, թերեւս, բառը կազմուել է Յունարէն չափել, սահմանել – բառի նշանակութիւնից (Տես՝ «*Арестовеческо — русткан сособар», сссс. И.Х.Аборецкан, т.2, №, 1958, с. 1539*), որից ծանարէն ունի *Ταλαυντον*, հայերէնը՝ տաղանդ: Ըստ Հր. Աճառեանի՝ տաղանդ բառը բուն իմաստով նշանակում է «կշռի մօտը», «կշիռ, ծանրութիւն, քաշ» եւ, մասնաւորապէս, «ծանրութեան եւ դրամի չափ, որ տեղի եւ ժամանակի համեմատ փոփոխում էր» (Հայերէն արմատական բառարան, հ. 4, էջ 363): Թարգմանելու համար Յունարէն *Ξιλογ* բառը, որ նշանակում է մաքու երգուող ռոտմաւոր, երգուող պատմութիւն, չափածոյ ստեղծագործութիւն, վիպասանութիւն, դիւցազներգութիւն, վիպերգ, հայ թարգմանիչները կազմել են տաղ բառը՝ իրրեւ չափածոյ խօսք, բանաստեղծութիւն, երգ, կշռութաւոր խօսք:

(Մարումակելի)

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ